Հաճախակի տրվող հարցեր (FAQ)

Մենինգոկոկային հիվանդություն



1. Ի՞նչ է մենինգոկոկային հիվանդությունը:

Մենինգիտի պատճառ են հանդիսանում բազմաթիվ տեսակի մանրէները: Մենինգոկոկային հիվանդության պատճառ է հանդիսանում Մենինգոկոկեր կոչվող բակտերիան (մանրէն): Այս մանրէն կարելի է գտնել քթի և կոկորդի մեջ: Յուրաքանչյուր տաս մարդուց մեկն ունենում է այս մանրէն՝ առանց երբևէ հիվանդանալու:

2. Ինչպե՞ս է տարածվում մենինգոկոկային հիվանդությունը:

Այս մանրէն տարածվում է մեկ մարդուց մյուսին, երբ առկա է թքի անմիջական կոնտակտ, կամ օդային կաթիլների միջոցով, որոնք գոյանում են հազալիս կամ փռշտալիս: Սերտ կոնտակտը (օրինակ՝ համբուրվելը), նույն տանը բնակվելը, կամ ուրիշների հետ սպասք, սնունդ կամ խմիչք կիսելը, կարող է տարածել այս մանրէն:

3. Որո՞նք են մենինգոկոկային հիվանդության նշանները:

Եթե ունեք այս ախտանիշներից մի քանիսը, անմիջապես բժշկական խնամք ստացեք:

- Բարձր ջերմաստիճան
- Լարված պարանոց
- Շփոթություն
- Ցան
- Ուժեղ գլխացավ
- Սրտխառնոց և փսխում
- Արյան ցածր ճնշում
- Ողջ մարմնի մկանների ցավ

4. Ինչպե՞ս է բուժվում մենինգոկոկային հիվանդությունը:

Այս հիվանդությունը կարող է բուժվել, եթե վաղ շրջանում բուժվի հակաբիոտիկներով (բակտերիա սպանող դեղորայք): Հակաբիոտիկները պետք է նշանակվեն բժշկի կողմից: Բժիշկը կբացատրի՝ ինչպես ճիշտ ընդունել հակաբիոտիկները:

5. Ինչպե՞ս կարող եք կանխել մենինգոկոկային հիվանդության տարածումը:

Հիմնական կետեր

- Մենինգոկոկային հիվանդության պատճառ են հանդիսանում բակտերիաները (մանրէները), և այն բուժվում է հակաբիոտիկների միջոցով:
- Մի կիսեք ուրիշների հետ սպասք, սնունդ կամ այլ իրեր, որոնք կարող են մանրէներ տարածել թքի միջոցով:
- Առողջ սովորույթներ պահպանեք, օրինակ՝ մի ծխեք և հեռու մնացեք հիվանդ մարդկանցից:
- Զրուցեք ձեր բժշկի հետ՝ պարզելու համար, եթե պատվաստումը ճիշտ է ձեզ համար:

QID-HEA-0007-04 (07/27/16)

- Սպասք, սնունդ, խմիչք, շուրթերի բալզամ կամ ծխախոտ մի կիսեք ուրիշների հետ:
- Հազալիս կամ փռշտալիս ծածկեք ձեր քիթը կամ բերանն արմունկով կամ անձեռոցիկով:
- Սահմանափակեք սերտ շփումը հիվանդ մարդկանց հետ:
- Զրուցեք ձեր բժշկի հետ պատվաստման մասին, եթե կարծում եք, որ հիվանդանալու ավելի բարձր հնարավորություն ունեք: Եթե վերջերս սերտ կոնտակտի մեջ եք եղել մի մարդու հետ, որը նոր էր հիվանդացել, անմիջապես դիմեք ձեր բժշկին՝ կանխարգելիչ դեղորայք ստանալու նպատակով:
- Պատվաստումը խորհուրդ է տրվում 2 ամսական կամ ավելի բարձր տարիքի երեխաներին և չափահասներին, որոնք ՄԻԱՎ (HIV) դրական են, համալսարանների ուսանողներին, որոնք բնակվում են կացարաններում, բժշկական լաբորատորիաների աշխատողներին, հիվանդությանը դիմադրելու ոչ ունակ մարդկանց, բոլոր նույնասեռական կամ երկսեռական տղամարդկանց, և 11-12 տարեկան երեխաներին ու պատանիներին, և երկրորդ պատվաստումը 16 տարեկանում:

Լրացուցիչ տեղեկությունների համար.

Los Angeles County, Department of Public Health (Լոս Անջելես վարչաշրջանի Հանրային առողջության բաժանմունք)
http://publichealth.lacounty.gov/acd/

California Department of Public Health (Կալիֆորնիայի Հանրային առողջության բաժանմունք)
www.cdph.ca.gov/healthinfo

Centers for Disease Control and Prevention (CDC) (Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոններ)
www.cdc.gov/diseasesconditions

QID-HEA-0007-04 (07/27/16)